ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Է.Հովհաննիսյանի ք.Դուշանբե (Տաջիկստան) կատարած գործուղման մասին

1. **Անունը, ազգանունը՝**
   Էդվարդ Հովհաննիսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   ք.Դուշանբե, 2019 թ. օգոստոսի 22-ից 24-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Տաջիկստանի Հանրապետության պետական ֆինանսական վերահսկողության և կոռուպցիայի դեմ պայքարի գծով գործակալություն

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն ԱՊՀ անդամ-պետությունների Հարկային (ֆինանսական) հետաքննության մարմինների ղեկավարների համակարգող խորհրդի (ՀՀՄՂՀԽ) հերթական 20-րդ նիստին

6. **Քննարկված թեմաները՝**

ՀՀՄՂՀԽ 20-րդ նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

- ՀՀՄՂՀԽ 19-րդ նիստի որոշումների իրականացման վերաբերյալ.
- Ծայրահեղականության, այդ թվում՝ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին ուղղված աշխատանքների վերաբերյալ.
- ԱՊՀ անդամ-պետությունների հարկային (ֆինանսական) հետախուզության մարմինների՝ իրենց պետություններում տնտեսական անվտանգության ապահովման գործունեության վերաբերյալ.
- Ենթաակցիզային ապրանքների անօրինական շրջանառության կանխարգելմանն ուղղված միջգերատեսչական համագործակցության փորձի վերաբերյալ.

- Դրամական միջոցների՝ արտասահմանից չվերադարձնելու հետ կապված իրավախախտումների բացահայտման, կանխման և հետաքննության ոլորտում համագործակցության և անօրինական խաղային բիզնեսի հակազդման գծով աշխատանքային խմբի գործունեության մասին.
- ԱՊՀ հարկային (ֆինանսական) հետաքննության մարմինների կադրերի պատրաստման վերաբերյալ.
- ՀՀՄՂՀԽ-ում նախագահության, նախագահի և համանախագահների վերաբերյալ.
- ԱՊՀ անդամ-պետությունների ՀՀՄՂՀԽ-ի գործունեության կազմակերպչական հարցերի վերաբերյալ՝
  - ✓ 2019-2023թթ. հարկային (ֆինանսական) հանցավորության դեմ պայքարի համատեղ միջոցառումների միջպետական ծրագրի իրականացման ՀՀՂՀԽ գործունեության պլանի վերաբերյալ.
  - ✓ ԱՊՀ անդամ-պետությունների ՀՀՄՂՀԽ-ի 2019-2020թթ. աշխատանքների ծրագրի վերաբերյալ.
  - ✓ ՀՀՄՀԽ-ի հերթական նիստի անցկացման վայրի և ամսաթվի վերաբերյալ,
  - ✓ ՀՀՄՀԽ-ի քարտուղարության, քարտուղարի և քարտուղարի տեղակալների վերաբերյալ.
- ՀՀՄՀԽ-ի 20-րդ նիստի հոբելյանական մեդալի վերաբերյալ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ԱՊՀ անդամ-պետությունների ՀՀՄՂՀԽ նիստի ընթացքում հանդես եկա ելույթով (կցվում է):

Համակարգող խորհրդի նիստի ընթացքում Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի պատվիրակությունն իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել նիստի օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի աշխատանքային քննարկումներին՝ հայտնելով ՀՀ ՊԵԿ դիրքորոշումը քննարկվող հարցերի կարգավորման վերաբերյալ:

Նիստի շրջանակներում կայացել են երկկողմանի հանդիպումներ օտարերկրյա հարկային (ֆինանսական) հետաքննության մարմինների ղեկավարների հետ, այդ թվում՝

- Ռուսաստանի Դաշնության ՆԳՆ տնտեսական անվտանգության և կոռուպցիայի հակազդեցության դեպարտամենտի պետ Ա.Կուրնոսենկոյի,
- Բելառուսի Հանրապետության Պետական հսկողության կոմիտեի նախագահի տեղակալ – ֆինանսական հետաքննությունների դեպարտամենտի տնօրեն Ի.Մարշալովի,
- Ղրղզստանի Հանրապետության ԿԱ տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի գծով պետական ծառայության նախագահ Բ.Թահիրովի,
- Տաջիկստանի Հանրապետության պետական ֆինանսական վերահսկողության և կոռուպցիայի դեմ պայքարի գործակալություն տնօրեն Ս.Սուլտոնզոդայի,
- Ուզբեկստանի Հանրապետության Գլխավոր դատախազության կից տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի գծով դեպարտամենտի պետ Դ.Ռախիմովի,
- Լատվիայի Հանրապետության պետական եկամուտների ծառայության հարկային և մաքսային ոստիկանության վարչության տնօրենի տեղակալ Ք.Պրուսակա-Բրինկմանեի:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համակարգող խորհրդի նիստի արդյունքները արձանագրվել են:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Նիստի արդյունքներով առաջարկվել է՝

- Ընդգրկել Հարկային (ֆինանսական) հետաքննության մարմինների ղեկավարների համակարգող խորհրդի նիստի որոշումների կատարումը ՀՀ ՊԵԿ հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության (ՀՕՀՎ) աշխատանքային ծրագրում,
- ՀՀ ՊԵԿ ՀՕՀՎ աշխատանքներում հատուկ ուշադրություն ցուցաբերել Հանցավորության դեմ պայքարի համատեղ միջոցների 2019-2023թթ. միջպետական ծրագրի իրականացման աշխատանքներին:

9. Գործուղվողը՝

Էդվարդ Հովհաննիսյան

10. Ստորագրությունը, ամսաթիվ

26 օգոստոսի 2019թ.